

ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ



ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ



Սիրելի՛ հաճախորդ, տեղեկացնում ենք, որ Ձեր իրավունքները կարող են պաշտպանվել ինչպես դատական կարգով, այնպես էլ Ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով:



Դատարան դիմելու դեպքում Ձեր և "Նորվիկ" ՈՒՎԿ ՓԲԸ-ի միջև ծագած վեճը լուծում է դատարանը: Դուք կարող եք դիմել դատարան բողոքի քննության ցանկացած փուլում: Դատարանի վճիռը չի կարող վերանայվել Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից:

Ֆինանսական համակարգի հաշտարարին դիմելու դեպքում Ձեր և "Նորվիկ" ՈՒՎԿ ՓԲԸ-ի միջև ծագած վեճը լուծում է Հաշտարարը՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Ֆինանսական համակարգի հաշտարարի ծառայություններն անվճար են:

Բողոք ունենալու դեպքում Դուք նախևառաջ պետք է դիմեք "Նորվիկ" ՈՒՎԿ ՓԲԸ: "Նորվիկ" ՈՒՎԿ ՓԲԸ-ի պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատասխանել Ձեր բողոքին: "Նորվիկ" ՈՒՎԿ ՓԲԸ-ի պատասխանը ստանալուց հետո Դուք կարող եք դիմել Ֆինանսական համակարգի հաշտարարին:

Ֆինանսական համակարգի հաշտարարը չի կարող քննել Ձեր բողոքը, եթե՝

1. Բողոք ներկայացնելուց հետո դեռ չի անցել 10 աշխատանքային օր և Դուք չեք ստացել "Նորվիկ" ՈՒՎԿ ՓԲԸ-ի պատասխանը, կամ
2. Դուք չեք պահանջում դրամական կամ այլ գույքային հատուցում, կամ
3. Ձեր կողմից պահանջվող հատուցումը գերազանցում է 10 միլիոն դրամը (կամ դրան համարժեք արտարժույթով գումարը), կամ
4. "Նորվիկ" ՈՒՎԿ ՓԲԸ-ի պատասխանը ստանալուց հետո անցել է ավելի քան վեց ամիս, կամ
5. Ձեր կողմից բողոքարկվող գործողությունը կամ անգործությունը տեղի է ունեցել 2008թ. օգոստոսի 2-ից առաջ:



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՎԵՇԱՐԱՐՐԻ
ԳՐԱՍԵՆՅԱԿ



Զգուշացնում ենք նաև, որ Ֆինանսական համակարգի հաշտարարը չի կարող քննել Ձեր բողոքը, եթե այն քննվում է դատարանի (կամ արբիտրաժային տրիբունալի) կողմից կամ արդեն իսկ առկա է այդ բողոքի վերաբերյալ դատարանի (կամ արբիտրաժային տրիբունալի) վճիռը:



Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ

Հաշտարար՝Փիրուզ Սարգսյան
Հասցե՝ 0010 ք. Երևան, Վազգեն Սարգսյան 26/1
«Էրեբունի Պլազա» բիզնես կենտրոն, 4-րդ հարկ,
411 սենյակ
Հեռ.՝ (37410) 58-23-22, 58-23-21
Էլ. հասցե՝www.fsm.am.....
Ֆաքս՝ (37410) 58-24-21



Սիրելի՛ հաճախորդ, հայտնում ենք Ձեզ, որ "Նորվիկ" ՈւՎԿ ՓԲԸ-ն չի հրաժարվել Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից:

Դա նշանակում է, որ "Նորվիկ" ՈւՎԿ ՓԲԸ-ն կարող է որոշ դեպքերում դատական կարգով վիճարկել Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից "Նորվիկ" ՈւՎԿ ՓԲԸ-ի դեմ կայացված որոշումները:



Դուք կարող եք նաև բողոքներով դիմել Կենտրոնական բանկ: Տեղեկացնում ենք, որ Կենտրոնական բանկն իրավասու չէ լուծել Ձեր և "Նորվիկ" ՈւՎԿ ՓԲԸ-ի միջև վեճերը, սակայն կարող է "Նորվիկ" ՈւՎԿ ՓԲԸ-ի նկատմամբ կիրառել պատասխանատվության միջոցներ, եթե պարզվի, որ "Նորվիկ" ՈւՎԿ ՓԲԸ-ն խախտել է օրենքի պահանջները:



ՀՀ Կենտրոնական բանկ

Հասցե՝ ...Երևան, Վազգեն Սարգսյան 6

Հեռ.՝ (37410) 58 38 41

Էլ. հասցե՝ mcba@cba.am.....

Ֆաքս՝(37410) 52 38 52.....

Կայք՝ www.cba.am.....